Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

**ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ**
**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**
**Հիմնադրամի հոգաբարձուների**
**խորհրդի 01-03-2024 թ. որոշմամբ**
**««ՎԱՐԴԱՆՅԱՆ ԸՆՏԱՆԻՔ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»**
**Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**
**հիմնադրամի 2023 թ. գործունեության մասին**

| | | |
|---|---|---|
| **1. Հիմնադրամի՝** | | |
| 1.1 Լրիվ անվանումը | | «ՎԱՐԴԱՆՅԱՆ ԸՆՏԱՆԻՔ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ |
| 1.2 Գտնվելու վայրը | | ԵՐԵՎԱՆ ՇԵՆԳԱՎԻԹ ՇԵՆԳԱՎԻԹ ԹԱՂԱՄԱՍ ՀՐԱՆՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ Փ. 6 |
| 1.3 Պետական գրանցման համարը | | 222.160.965991 |
| 1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը | | 2017-07-06 |
| 1.5 ՀՎՀՀ-ն | | 02269952 |
| 1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային) | | +(374)91011770 |
| 1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը | | |
| 1.8 Էլեկտրոնային փոստը | | info@vardanyan-himnadram.am |
| **2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝** | | |
| Կարեն Վարդանյան | | |
| Միքայել Վարդանյան | | |
| Զինա Մուրուզյան | | |
| **3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝** | | |
| Կարեն Վարդանյան | | |
| Միքայել Վարդանյան | | |
| Զինա Մուրուզյան | | |
| **4. Կառավարչի անուն, ազգանուն՝** | | |
| Արամ Ղազարյան | | |
| **5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը** | 23 | |
| **6. Անձեռնմխելի կապիտալի չափը** | | |
| **7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ** | | |
| **8. Ֆինանսավորման աղբյուրները՝** | | |
| 8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի | 8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը | 8.3 Չափը |
| 8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր | | |
| | | |
| 8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր | | |
| | | |
| 8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր | | |

| | | |
|---|---|---|
| | 0 | 0 |
| **9. Հիմնադրի ներդրումը՝** | | |
| 9.1 Դրամական միջոցներ | 1,356,064,661 | |
| 9.2 Գույք | 9.2.1 Տեսակը | 9.2.2 Արժեքը |
| | | |
| **10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները** | | |
| 10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝ | 10.2 Նվիրված/նվիրաբերված գույք | |
| | 10.2.1 Տեսակը | 10.2.2 Արժեքը |
| 10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ | | |
| | | |
| 10.1.2 Իրավաբանական անձինք | | |
| | | |
| 10.1.3 Ֆիզիկական անձինք | | |
| | | |

| | |
|---|---|
| **11. Իրականացված ծրագրերը՝** | |
| 11.1 Ծրագրի անվանումը | 11.2 Ծախսված գումարը |
| Երևանի 2800-ամյակի այգու տարածքի սպասարկում և խնամքի իրականացում | 104,190,506 |
| Սուրբ Թադևոս եկեղեցու տարածքում ընթացիկ շինարարական աշխատանքների կատարում | 10,873,183 |
| ՙԶինվորի տուն՚ բարեգործական հիմնադրամին նվիրատվություն | 8,116,447 |
| ՙԱՅԲ՚կրթական հիմնադրամին դրամական նպատակային նվիրաբերություն | 7,126,560 |
| ՙՍիթի օֆ Սմայլ ժպիտների քաղաք՚ ԲՀ-ին նպատակային նվիրատվություն | 5,000,000 |
| Գիտություն և գործարար օրեր 2023 գիտաժողովի կազմակերպման ծախսեր | 60,129,989 |
| ՙՍուրբ Գրիգոր Լուսավորիչ՚ ԲԿՓԲԸ-ին բժշկական՝ բժշկության օգնության ու սպասակման ոլորտում օգտագործելու նպատակով նվիրաբերություն | 116,487,000 |
| ՙՀայ մայրեր՚ բարեգործական հիմնադրամ-ին ամանորի կապակցությամբ հրուշակեղենի ձեռքբերում և նվիրատվություն | 1,769,200 |
| ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքին տրանսպորտային միջոցների /հատուկ տեխնիկայի/ և աղբամանների նվիրատվություն | 108,950,000 |
| Արտամարմնային բեղմնավորման համար աջակցություն | 4,348,000 |
| Նյութի հեռարձակում | 68,969,500 |
| Գրանդ Հոլդինգի աշխատողներին ամանորի կապակցությամբ հրուշակեղենի ձեռքբերում և նվիրատվություն | 46,667,477 |
| Սոցիալապես անապահով ընտանիքներին անշարժ գույքի, կահույքի, կենցաղային տեխնիկայի նվիրատվություն | 239,405,514 |

Digitally signed by MARGARYAN ARTUR 2707780081
Date: 2024.06.07 13:05:06 AMT

| | |
|---|---|
| Վաչիկ Անդրանիկի Վարդազարյանին նվիրաբերություն իր և ընտանիքի անդամների սոցիալական պայմանների բարելավման նպատակով նվիրաբերություն | 27,000,000 |
| Գյուղատնտեսական սարքավորումներ գյուղացիներին աջակցելու նպատակով նվիրատվություն | 325,795,000 |
| Բարերար ԷՅԷՄ կայքի պատրաստում | 2,093,500 |
| ՀՀ Երեխաների Աջակցության Հիմնադրամին նվիրատվություն | 3,000,000 |
| Գառնիկ Խաչատրյանի համար լողական սարքի տեղադրում, Հայաստանում Հայկական Միջազգային Բժշկական Հիմնադրամի միջոցով | 5,606,000 |
| **12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը** | 1,279,119,800 |
| **13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը** | 1,145,527,876 |

Նշումներ՝

---

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ ___14___էջերից:
էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն ____________________
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ ____________________
ստորագրությունը, անունը, ազգանունը

# ՎԱՐԴԱՆՅԱՆ ԸՆՏԱՆԻՔ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2023թ.**

PROGRESS AUDIT

**ԵՐԵՎԱՆ 2024**

# Բովանդակություն


| | էջ |
|---|---|
| Անկախ աուդիտորի եզրակացություն | 3-5 |
| Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն | 6 |
| Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն | 7 |
| Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն | 8 |
| Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ | 9 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ Ւ
ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ
ՀԳԳՀ # 1 20 0333

«ՊՐՈԳՐԵՍ-ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/3

# Անկախ Աուդիտորի Եզրակացություն

Վարդանյան Ընտանիք
Բարեգործական Հիմնադրամ
Հոգաբարձուների խորհրդին

*Կարծիք*

Մեր կողմից իրականացվել է «Վարդանյան Ընտանիք» Բարեգործական Հիմնադրամի (Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում՝ այդ հաշվետվությունները ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով արժանահավատ են և տալիս են ճշմարիտ ու իրական պատկերը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի ֆինանսական վիճակի, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի մասին՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների Միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

*Կարծիքի հիմքեր*

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

*Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար*

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:
Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու, ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Հիմնադրամը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:
Կառավարման օղակներում ներգրավված անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

*Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիքներ՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցրած կարող են ազդել այդ ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:
ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք՝

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ

PROGRESS AUDIT

հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Հիմնադրամի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Հիմնադրամի անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ Հիմնադրամը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:
- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը, և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

21 Մարտի 2024թ.

| | |
|---|---|
| Ռուզաննա Արզումանյան | Կարինե Գալստյան |
| Գլխավոր տնօրեն | Խմբի ղեկավար-աուդիտոր |

# Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

31 դեկտեմբերի 2023թ.

*(հազար դրամ)*

| | *Ծանոթագրություն* | *31 դեկտեմբեր 2023* | *31 դեկտեմբեր 2022* |
|---|---|---|---|
| *Ոչ ընթացիկ ակտիվներ* | | | |
| Հիմնական միջոցներ | 4 | 41,313 | 43,869 |
| Ոչ նյութական ակտիվներ | 5 | 148 | 168 |
| | | *41,461* | *44,037* |
| *Ընթացիկ ակտիվներ* | | | |
| Պաշարներ | 6 | 249,761 | 88,322 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 7 | 11,927 | 40,254 |
| Դրամական միջոցներ | 8 | 151,269 | 61,132 |
| | | *412,957* | *189,708* |
| ***Ընդամենը ակտիվներ*** | | **454,418** | **233,745** |
| Զուտ կապիտալ | | - | - |
| | | - | - |
| *Ոչ ընթացիկ պարտավորություններ* | | | |
| Ակտիվներին վերաբերող շնորհներ | 10 | 41,461 | - |
| | | *41,461* | - |
| *Ընթացիկ պարտավորություններ* | | | |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 9 | 17,743 | 17,285 |
| Ընթացիկ շնորհներ | 10 | 393,857 | 215,593 |
| Շահութահարկի գծով պարտավորություն | | 1,357 | 867 |
| | | *412,957* | *233,745* |
| ***Ընդամենը պարտավորություններ*** | | **454,418** | **233,745** |

Արամ Ղազարյան
Տնօրեն

Արթուր Մարգարյան
Գլխավոր հաշվապահ

Վավերացման ամսաթիվ 21/03/2024թ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 31-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ

| | Ծանոթ. | 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|---|
| Եկամուտներ շնորհներից | 11 | 1,138,196 | 1,257,776 |
| Ծրագրային ծախսեր | 12 | (1,003,535) | (1,125,453) |
| Վարչական ծախսեր | 13 | (132,900) | (126,868) |
| Գործառնական այլ եկամուտներ | | 8,087 | 4 |
| Գործառնական այլ ծախսեր | | (6,249) | (2,864) |
| | | *3,599* | *2,595* |
| Ֆինանսական եկամուտ (ծախս) | 14 | 5,701 | 4,178 |
| Այլ ոչ գործառնական եկամուտ (ծախս) | 15 | (7,943) | (7,569) |
| Շահութահարկի գծով (ծախս) փոխհատուցում | 16 | (1,357) | (867) |
| Տարվա զուտ արդյունք | | - | (1,663) |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ | | - | - |
| **Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ** | | **-** | **(1,663)** |

Արամ Ղազարյան
Տնօրեն

Արթուր Սարգսյան
Գլխավոր հաշվապահ

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 31-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

հազար դրամ

| | 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| **Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր** | | |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից | 6,249 | - |
| Դրամաշնորհներից | 1,354,360 | 1,040,907 |
| Գործառնական գործունեությունից այլ մուտքեր | 1,825 | - |
| **Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր** | **1,362,434** | **1,040,907** |
| **Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր** | | |
| Գնումների գծով | (1,141,042) | (1,127,161) |
| Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից | (74,738) | (61,345) |
| Վճարումներ բյուջե | (50,534) | (20,424) |
| Գործառնական գործունեությունից այլ ելքեր | (4,985) | - |
| Դրամական օգնություն | | |
| **Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր** | **(1,271,299)** | **(1,208,930)** |
| ***Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր*** | ***91,135*** | ***(168,023)*** |
| **Ներդրումային գործունեությունից մուտքեր** | | |
| Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների վաճառքներից | - | 7,594 |
| Շահաբաժինների և տոկոսների ստացումից | 5,701 | 4,178 |
| **Ընդամենը ներդրումային գործունեությունից մուտքեր** | **5,701** | **11,772** |
| **Ներդրումային գործունեությունից ելքեր** | | |
| Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռքբերման գծով | (4,677) | (23,681) |
| **Ընդամենը ներդրումային գործունեությունից ելքեր** | **(4,677)** | **(23,681)** |
| ***Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր*** | ***1,024*** | ***(11,909)*** |
| **Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների մուտքեր** | | |
| Ֆինանսավորման այլ գործունեությունից մուտքեր | - | - |
| **Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից մուտքեր** | - | - |
| **Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների ելքեր** | | |
| Ֆինանսավորման այլ գործունեությունից ելքեր | - | - |
| **Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից ելքեր** | - | - |
| ***Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր*** | - | - |
| **Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր** | **92,159** | **(179,932)** |
| **Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ** | (2,022) | (677) |
| **Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը** | **61,132** | **241,741** |
| **Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին** | **151,269** | **61,132** |

Արամ Ղազարյան
Տնօրեն

Արթուր Սարգսյան
Գլխավոր հաշվապահ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 31-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններ

*«Վարդանյան Ընտանիք» Բարեգործական Հիմնադրամ*
*2023թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ*

## 1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Վարդանյան Ընտանիք» Բարեգործական Հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) հիմնադիրների կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը հիմնադրվել է 2017 թվականի հունիսի 30-ին և գործում է ՀՀ Սահմանադրության, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, Հիմնադրամների մասին ՀՀ օրենքի, ՀՀ Միջազգային պայմանագրերի, իր կանոնադրության և այլ իրավական ակտերի համաձայն:

Գրանցվել է Հայաստանի Հանրապետության Իրավաբանական անձանց Պետական Ռեգիստրի կողմից՝ 2017թ. հուլիսի 06-ին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան (պետական գրանցման համարը՝ 222.160.965991, ՀՎՀՀ՝ 02269952):

Հիմնադրամի հիմնադիրներն են՝

- ✓ Կարեն Վարդանյանը,
- ✓ Միքայել Վարդանյանը,
- ✓ Զինա Մուրուզյանը:

Համաձայն կանոնադրության՝ Հիմնադրամի գործունեության նպատակներն են՝

- ՀՀ ֆիզիկական և իրավաբանական անձանց, օտարերկրյա քաղաքացիներին քաղաքացիություն չունեցող անձանց կենցաղային պայմանների բարելավում;
- ՀՀ սահմանամերձ գոտիներում բնակվող անձանց բնակության համար կենցաղային նպաստավոր պայմանների ստեղծում,
- Առողջապահության զարգացման աջակցություն
- Պատերազմի և արտակարգ իրավիճակների հետևանքով տուժած անձանց նյութական աջակցության ցուցաբերում,
- Գիտության, կրթության, արվեստի գրականության սպորտի ոլորտների բարեգործական ծրագրերի իրականացման աջակցություն,
- Մանուկներին, հաշմանդամներին և սոցիալական անապահով խավերին աջակցություն:

Հիմնադրամի շահառուներն են՝

- ✓ ՀՀ սահմանամերձ գոտիներում բնակվող ՀՀ քաղաքացիներ, օտարերկրյա քաղաքացիներ, քաղաքացիություն չունեցող անձինք;
- ✓ Առողջապահության ոլորտում գործունեություն ծավալող իրավաբանական անձինք;
- ✓ Պատերազմի և արտակարգ իրավիճակների հետևանքով տուժած անձինք;
- ✓ Գիտության, կրթության, արվեստի, գրականության սպորտի ոլորտներում գործունեություն իրականացնող իրավաբանական և ֆիզիկական անձինք;
- ✓ Մանուկներ, հաշմանդամներ և սոցիալապես անապահով ընտանիքների անդամները:

«Վարդանյան Ընտանիք» Բարեգործական Հիմնադրամի կողմից 2023 թվականին իրականացված և իրականացվող ծրագրերը հետևյալն են՝

1. «Երևանի 2800-ամյակի այգու տարածքի սպասարկում և խնամքի իրականացում» ծրագրի շրջանակներում իրականացված շին. մոնտաժային աշխատանքներ՝ **104,190,506 ՀՀ դրամ** գումարի չափով,

2. ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի «Սուրբ Թադևոս» եկեղեցու տարածքում ընթացիկ շինարարական աշխատանքների կատարում, ապրանքների և ծառայությունների ձեռքբերում՝ **10,873,183 ՀՀ դրամ** գումարի չափով,

3. «Զինվորի տուն» բարեգործական հիմնադրամին դրամական նվիրատվություն՝ **8,116,447 ՀՀ դրամ** գումարի չափով,

4. «ԱՅԲ» կրթական հիմնադրամին դրամական նպատակային նվիրաբերություն՝ 18,000 ԱՄՆ դոլարին համարժեք **7,126,560 ՀՀ դրամ** գումարի չափով,

5. «Սիթի օֆ Սմայլ ժպիտների քաղաք» ԲՀ-ին նպատակային նվիրատվություն՝ **5,000,000 ՀՀ դրամ** գումարի չափով,

6. «Գիտություն և գործարար օրեր 2023» զիտաժողովի կազմակերպման ծախսեր՝ **60,129,989 ՀՀ դրամ** գումարի չափով,

7. «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ-ին բժշկական օգնության ու սպասարկման ոլորտում օգտագործելու նպատակով նվիրաբերություն՝ **116,487,000 ՀՀ դրամ** գումարի չափով (գույքի ձեռքբերման և տրամադրման վերաբերյալ տեղեկատվական աղյուսակը՝ ստորև).

| N | Գույքի անվանումը | 2023թ-ի ընթացքում ձեռքբերված գույքի արժեք | | | 2023թ-ի ընթացքում շահառուին տրամադրված գույքի արժեք | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Քանակ | Գին | Գումար | Քանակ | Գումար |
| 1 | Նորածնային բարձր հաճախականության արհեստական շնչառության սարք | 1 | 13,800,000 | 13,800,000 | 1 | 13,800,000 |
| 2 | Նորածնային վերակենդանացման սեղան | 3 | 7,650,000 | 22,950,000 | 3 | 22,950,000 |
| 3 | Էլեկտրոէնցեֆալոգրաֆիայի սարք նորածնային | 1 | 5,500,000 | 5,500,000 | 1 | 5,500,000 |
| 4 | ՄՌՏ համատեղելի պացիենտ մոնիտոր | 1 | 15,500,000 | 15,500,000 | 1 | 15,500,000 |
| 5 | Նորածնային ինկուբատոր | 2 | 7,750,000 | 15,500,000 | 2 | 15,500,000 |
| 6 | Շարժական ուլտրաձայնային համակարգ/նեոնատոլոգիական մանկական | 1 | 12,100,000 | 12,100,000 | 1 | 12,100,000 |
| 7 | Ծննդաբերական սեղան | 3 | 7,400,000 | 22,200,000 | 3 | 22,200,000 |
| 8 | Բժշկական էլեկտրոհիդրավլիկ վիրահատական բազմաֆունկցիոնալ սեղան ET700 | 3 | 2,979,000 | 8,937,000 | 3 | 8,937,000 |
| | Ընդամենը | | | 116,487,000 | | 116,487,000 |

8. «Հայ Մայրեր» բարեգործական հիմնադրամին ամանորի կապակցությամբ քաղցրավենիքի և հրուշակեղենի ձեռքբերում և նվիրատվություն՝ 1,769,200 ՀՀ դրամ գումարի չափով,

9. ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքին տրանսպորտային միջոցների /հատուկ տեխնիկայի/ և աղբամանների նվիրատվություն՝ 108,950,000 ՀՀ դրամ գումարի չափով, որն ամբողջությամբ տրամադրվել է գույքի ձեռքբերումներին և որոնք տարեվերջի դրությամբ դեռևս չէին հանձնվել շահառուին (գույքի ձեռքբերման և տրամադրման վերաբերյալ տեղեկատվական աղյուսակը՝ ստորև).

| N | Գույքի անվանումը | 2023թ-ի ընթացքում ձեռքբերված գույքի արժեք | | | 2023թ-ի տարեվերջի դրությամբ դեռևս շահառուին չհանձնված գույքի արժեք | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Քանակ | Գին | Գումար | Քանակ | Գումար |
| 1 | Աղբատար մեքենա KO-427-72 ամրաշրջանակ ԿամԱԶ – 53605 – 773950 - 48 | 1 | 41,250,000 | 41,250,000 | 1 | 41,250,000 |
| 2 | Բազմաֆունկցիոնալ ճանապարհային մեքենա KO - 806 ամրաշրջանակ 43253 – 2010 – 69 | 1 | 38,300,000 | 38,300,000 | 1 | 38,300,000 |
| 3 | Աղբամաև մետաղյա ցինկապատ 1,100լ | 230 | 127,826 | 29,400,000 | 230 | 29,400,000 |
| | Ընդամենը | | | 108,950,000 | | 108,950,000 |

10. Արտամարմնային բեղմնավորման համար աջակցություն՝ 34,075,200 ՀՀ դրամ գումարի չափով: 2023թ-ի տարեսկզբի դրությամբ ծրագրին ուղղված վճարումներից մնացած կանխավճարների հանրագումարը կազմել է 30,550,450 ՀՀ դրամ: 2023թ-ի ընթացքում ծրագրի ֆինանսավորման համար վճարվել է ևս 4,348,000 ՀՀ դրամ: Տարեվերջին ծրագրի դեռևս չիրականացված մասի գծով կանխավճարի չափը կազմել է 823,250 ՀՀ դրամ,
11. Բարեգործական ծրագրերի մասով նյութերի հեռարձակում՝ 67,443,500 ՀՀ դրամ գումարի չափով: 2023թ-ի տարեսկզբին ծրագրի իրականացված մասի գծով գործընկերների կրեդիտորական պարտքի մնացորդը կազմել է 1,526,000 ՀՀ դրամ: 2023թ-ի ընթացքում ծրագրի ֆինանսավորման համար վճարվել է ընդամենը 68,969,500 ՀՀ դրամ,
12. «Գրանդ Հոլդինգ»-ի աշխատակիցներին ամանորի կապակցությամբ սննդամթերքի և հրուշակեղենի ձեռքբերում և նվիրատվություն՝ 46,667,477 ՀՀ դրամ գումարի չափով,
13. Վաչիկ Անդրանիկի Վարդազարյանին և իր ընտանիքի անդամներին սոցիալական պայմանների բարելավման նպատակով նվիրաբերություն՝ 27,000,000 ՀՀ դրամ գումարի չափով,
14. Երեխաների Աջակցության Հիմնադրամին նվիրատվություն՝ 3,000,000 ՀՀ դրամ գումարի չափով,
15. «Բարերար ԷՅԷՄ» կայքի պատրաստման ծախսեր՝ 93,500 ՀՀ դրամ գումարի չափով: 2023թ-ի ընթացքում ծրագրի ֆինանսավորման համար վճարվել է ընդամենը 2,093,500 ՀՀ դրամ: Տարեվերջին ծրագրի դեռևս չիրականացված մասի գծով կանխավճարի չափը կազմել է 2,000,000 ՀՀ դրամ,

16. Սոցիալապես անապահով ընտանիքներին անշարժ գույքի, կահույքի և կենցաղային տեխնիկայի նվիրատվություն՝ 211,655,847 ՀՀ դրամ գումարի չափով (գույքի ձեռքբերման և տրամադրման վերաբերյալ տեղեկատվական աղյուսակը՝ ստորև).

| N | Գույքի կամ աշխատանքի անվանումը | 2023թ-ի ընթացքում ձեռքբերված գույքի և կատարված աշխատանքների արժեք | | | 2023թ-ի ընթացքում շահառուներին տրամադրված գույքի և կատարված աշխատանքների արժեք | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Քանակ | Գին | Գումար | Քանակ | Գումար |
| 1 | Բնակարան (ք. Արտաշատ) | 1 | 20 211 111 | 20 211 111 | 1 | 20 211 111 |
| 2 | Բնակարան (ք. Երևան, Նոր Նորք) | 1 | 28 178 889 | 28 178 889 | 1 | 28 178 889 |
| 3 | Բնակարան (ք. Վանաձոր) | 1 | 23 966 667 | 23 966 667 | 1 | 23 966 667 |
| 4 | Բնակարան (ք. Մասիս) | 1 | 19 658 889 | 19 658 889 | 1 | 19 658 889 |
| 5 | Բնակարան (ք. Հրազդան) | 1 | 21 087 777 | 21 087 777 | 1 | 21 087 777 |
| 6 | Բնակարան (ք. Սպիտակ) | 1 | 12 451 111 | 12 451 111 | 1 | 12 451 111 |
| 7 | Բնակարան (ք. Երևան, Նուբարաշեն) | 1 | 26 235 145 | 26 235 145 | 1 | 26 235 145 |
| 8 | Բնակարան (ք. Սպիտակ) | 1 | 17 912 222 | 17 912 222 | 1 | 17 912 222 |
| 9 | Բնակարան (ք. Մասիս) | 1 | 27 749 667 | 27 749 667 | - | - |
| 10 | Բնակարան (ք. Վաղարշապատ) | 1 | 19 887 778 | 19 887 778 | 1 | 19 887 778 |
| 11 | Խոհանոցային պարագաներ | 1 | 802 730 | 802 730 | 1 | 802 730 |
| 12 | Երեխաների հագուստ | 1 | 1 964 830 | 1 964 830 | 1 | 1 964 830 |
| 13 | Նվեր տուփ | 4 | 60 000 | 240 000 | 4 | 240 000 |
| 14 | Պլանշետ Samsung | 27 | 62 074 | 1 676 000 | 27 | 1 676 000 |
| 15 | Բազմոց փայտյա հիմքով կտորե պաստառով | 3 | 310 000 | 930 000 | 3 | 930 000 |
| 16 | Ներքնակ 90*190 ալֆա էլիտար | 38 | 36 421 | 1 384 000 | 38 | 1 384 000 |
| 17 | Ներքնակ 1,60*1,90 ալֆա էլիտար | 5 | 64 400 | 322 000 | 5 | 322 000 |
| 18 | Գազի վառարան | 3 | 70 000 | 210 000 | 3 | 210 000 |
| 19 | Սպասք լվացող մեքենա Toshiba | 1 | 164 000 | 164 000 | 1 | 164 000 |
| 20 | Սպասք լվացող մեքենա Toshiba (S) | 3 | 151 667 | 455 000 | 3 | 455 000 |
| 21 | Սպասք լվացող մեքենա Toshiba (W) | 2 | 152 500 | 305 000 | 2 | 305 000 |
| 22 | Ավտոմատ լվացքի մեքենա Samsung | 5 | 159 000 | 795 000 | 5 | 795 000 |
| 23 | Միկրոալիքային վառարան Samsung | 6 | 44 000 | 264 000 | 6 | 264 000 |
| 24 | Փոշեկուլ Samsung | 6 | 32 000 | 192 000 | 6 | 192 000 |
| 25 | Հեռուստացույց Samsung | 2 | 158 000 | 316 000 | 2 | 316 000 |
| 26 | Խոհանոցային կոմբայն Bosch MC812M865 | 2 | 120 000 | 240 000 | 2 | 240 000 |
| 27 | Խոհանոցային կոմբայն Bosch MC812S844 | 4 | 104 500 | 418 000 | 4 | 418 000 |
| 28 | Խոհանոցային սալօջախ, գազօջախ Bosch HXC39AG20Q | 2 | 258 750 | 517 500 | 2 | 517 500 |
| 29 | Խոհանոցային սալօջախ, գազօջախ Bosch HXC39AG50Q | 3 | 266 000 | 798 000 | 3 | 798 000 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 30 | Հեռուստացույց Samsung UE43T5300AUXCE | 2 | 170 000 | 340 000 | 2 | 340 000 |
| 31 | Սառնարան Bosch KGV39XW21R*/ | 2 | 201 700 | 403 400 | 2 | 403 400 |
| 32 | Սառնարան Indesit DFZ 4150.1 S | 1 | 165 000 | 165 000 | 1 | 165 000 |
| 33 | Սառնարան և սառցախցիկ Indesit DFZ 4150.1 S | 1 | 165 000 | 165 000 | 1 | 165 000 |
| 34 | Սառնարան և սառցախցիկ Indesit DS 4 180 SB | 1 | 163 200 | 163 200 | 1 | 163 200 |
| 35 | Սառնարան Indesit DS 4200 SB | 1 | 156 666 | 156 666 | 1 | 156 666 |
| 36 | Սառցախցիկ Indesit DFZ 4150.1 S | 4 | 138 333 | 553 332 | 4 | 553 332 |
| 37 | Սառցախցիկ Indesit DS 4180 SB | 1 | 163 200 | 163 200 | 1 | 163 200 |
| 38 | Ճաշասեղան | 6 | 90 000 | 540 000 | 6 | 540 000 |
| 39 | Խոհանոցային սեղան | 8 | 40 000 | 320 000 | 8 | 320 000 |
| 40 | Աթոռակ-պուֆիկ | 22 | 5 000 | 110 000 | 22 | 110 000 |
| 41 | Մահճակալ 2 հարկ, 90*190 առանց ներքնակ | 17 | 130 000 | 2 210 000 | 17 | 2 210 000 |
| 42 | Մահճակալ 90 առանց ներքնակ | 4 | 55 000 | 220 000 | 4 | 220 000 |
| 43 | Աթոռ | 36 | 11 667 | 420 000 | 36 | 420 000 |
| 44 | Խոհանոցի կահույք լամինատե | 4 | 178 750 | 715 000 | 4 | 715 000 |
| 45 | Մահճակալ 160 առանց ներքնակ | 1 | 120 000 | 120 000 | 1 | 120 000 |
| 46 | Մահճակալ 160*190 | 4 | 108 000 | 432 000 | 4 | 432 000 |
| 47 | Խոհանոցի աթոռակ | 28 | 5 000 | 140 000 | 28 | 140 000 |
| 48 | Աթոռներ հյուրասենյակի | 12 | 11 667 | 140 000 | 12 | 140 000 |
| 49 | Վերանորոգման աշխատանքներ | 1 | 2 453 400 | 2 453 400 | 1 | 2 453 400 |
| 50 | Գեյզեր C9000w CEMSAN | 1 | 27 000 | 27 000 | 1 | 27 000 |
| 51 | Օրորոց ներքնակով | 1 | 115 000 | 115 000 | 1 | 115 000 |
| | **Ընդամենը** | | | **239 405 514** | | **211 655 847** |

17. Գյուղատնտեսական սարքավորումների ձեռքբերում և նվիրատվություն՝ գյուղացիներին աջակցելու նպատակով՝ 294 301 000 ՀՀ դրամ գումարի չափով (գույքի ձեռքբերման և տրամադրման վերաբերյալ տեղեկատվական աղյուսակը՝ ստորև).

| N | Գույքի կամ ծառայության անվանումը | 2023թ-ի ընթացքում ձեռքբերված գույքի և ծառայությունների աշխատանքների արժեք | | | 2023թ-ի ընթացքում շահառուներին տրամադրված գույքի և ծառայությունների արժեք | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Քանակ | Գին | Գումար | Քանակ | Գումար |
| 1 | Տրակտոր Բելառուս-82.1 | 12 | 9 900 000 | 118 800 000 | 12 | 118 800 000 |
| 1.1 | Գութան ПЛН-3-35П | 12 | 750 000 | 9 000 000 | 12 | 9 000 000 |
| 1.2 | Խոտամամլիչ-հակավորիչ | 1 | 5 194 000 | 5 194 000 | 1 | 5 194 000 |
| 1.3 | Խոտամամլիչ-հակավորիչ | 1 | 4 305 000 | 4 305 000 | 1 | 4 305 000 |
| 2 | Մինի տրակտոր բելառուս 152 | 12 | 2 600 000 | 31 200 000 | 12 | 31 200 000 |
| 2.1 | Օկունչիկ Ունիվերսալ ՕՌԻ-00.000 | 12 | 70 000 | 840 000 | 12 | 840 000 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2.2 | Խոտհնձիչ համակարգ KTM 00.000 | 12 | 295 000 | 3 540 000 | 12 | 3 540 000 |
| 2.3 | Կուլտիվատոր ԿՏԴ-1.3 | 12 | 75 000 | 900 000 | 12 | 900 000 |
| 2.4 | Գութան ունիվերսալ ՊՌՒ 00.000 | 12 | 55 000 | 660 000 | 12 | 660 000 |
| 2.5 | Հակեր հավաքող սարք HSA86 (AT 3881) | 6 | 4 000 000 | 24 000 000 | 6 | 24 000 000 |
| 2.6 | Շարժական սրսկիչ-հեղուկցիր, թունաքիմիկատների սրսկող սարք | 6 | 230 000 | 1 380 000 | 6 | 1 380 000 |
| 3 | ՈՒԱԶ մակնիշի ավտոմեքենաներ | 12 | 10 100 000 | 121 200 000 | 9 | 90 900 000 |
| 3.1 | Գազաբալոնային համակարգ | 12 | 388 000 | 4 656 000 | 9 | 3 492 000 |
| 3.2 | Գազաբալոնային համակարգի տեղադրում | 12 | 10 000 | 120 000 | 9 | 90 000 |
| | Ընդամենը | | | 325 795 000 | | 294 301 000 |

18. Գառնիկ Խաչատրյանի համար լսողական սարքի տեղադրում, «Հայաստանում Հայկական Միջազգային Բժշկական Հիմնադրամ»-ի միջոցով՝ 5 606 000 ՀՀ դրամ գումարի չափով:

Հիմնադրամի իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Հրանտ Վարդանյան 6:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ աշխատակիցների թվաքանակը կազմել է 23 մարդ (2022՝ 25 մարդ):



Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 07.06.2024 12:33